













նէք ու կաթողիկէ Հայոց կը վերադարձնէր այնպիսի դժուարութիւններ, զոր ունեցած չեմք եւ չեմք կարող ունենալ:

Յայնժամ չուզեցինք պատահական մասնակցութիւն անկողմնակալ բանակներ մը կրնար ստիպել զմեզ հրապարակել այնպիսի ճշմարտութիւններ, որոց գիտութիւնն ո՛չ ամենուն կը թուի անորոշելի լինել: Բայց Պ. Կ. Իւթիւնեանի անհաջգրութիւնն ապացոյց է թէ որքան անօգուտ են եղեր մեր բոլոր փոփոխական քաղաքականութիւնը, Հետեւեալ կը փութամք այս պատահանքը:

Նախ Արժ. Յոգեւածագիրն կը մերժէ (Էջմիածնական) բառն եւ չարամիտ պարտաւանք չկը վերադարձնէ անոնց որք զործածած են ու կը գործածեն դայի բառ: Բայց ի՞նչպէս ենթադրել թէ մենք չարամիտութիւնն է եւ պարտաւանքն է գիտում ունեցած լինինք, քանի որ մեր բոլոր խօսքն ու գրութեան մէջ կը փայլէր այնքան ներողամիտ եղբայրսիրութիւն, այնքան յարգալից գորով: Բայց միթէ չարամիտ բառաւորացին չէր լինէր, եթէ փոխանակ այլոց խրատաւորութեան զի քարի օրինակ առնուէր Բիւզանդիոյ խմբագրականէն: Արժ. Յոգեւածագիրն նախ ինքն այդ ազնիւ օրինակէն օգտուէր:

Թեպէտեւ մեր բուն անունն է Հայ Կաթողիկէ եւ ձեր իսկ օրի նախա, «Օսմանեան մեծադոր Տէրութիւն» բառն «Ռոմայը Էրմէնիէ» չկոչուի զմեզ սակայն դուք գրեթէ «Հայ-Հոռոմեական կառնուէք» զմեզ, եւ մենք բնաւ փորձուած չեմք: Չարամիտ պարտաւանքն է մը գտնել այդ յորձրձ ման մէջ: Եթէ տիեզերական եկեղեցին եւ ընդունած է ինքն իրեն ընծայած է այդ տիպոսն ապա՝ ճշտել այն է որ տեսակ մը հարկաւորութիւն եղած է այս կեղծ (կաթողիկէ)ներու խաբէութեանց առջեւ: Բայց մեր բուն անունն, եկեղեցական, դարաւոր, տիեզերական ընկալեալ անունն է «Կաթողիկէ»: Հետեւեալ իրաւունք ունինք պահանջելու որ այսպէս անուանեն զմեզ նաեւ մեր սիրելի համագրային եղբայրք:

Բայց ի՞նչու այդքան վերաւորելի կը թուի այդ բառ: արդեօք մեր սիրեցեալ եղբայրք փառք չեն համարիր Էջմիածնայ հնազանդի, ինչպէս մեք փառք եւ պարծանք եւ երանութիւն կը համարիմք մեզ հնազանդի Հոռոմայ, ճանաչել նորա տիեզերափայլ գերիշխանութիւնն, եւ խոնարհիլ նորա անուրիւն (1) վարդապետութեան եւ փրկարար անմահատար սկզբանց տուջեւ:

Անիմատ է այն առարկութիւն թէ «Սոս» եւ Աղթամարայ թեմականք եւս պարտին կոչուելու ուրեւմը Սաական եւ Աղթամարական: Միթէ եկեղեցի մը կրնայ երկու կամ երեք գլուխ ունենալ: ո՛չ անշուշտ: Ուրեմն կենթադրութիւն որ կամ այլ Աթոռն կը հնա-

զանդին Էջմիածնայ եւ կամ հերձուած մը կայ անոնց մէջ: Այս երկրորդ ենթադրութիւնն չենք կարծար որ հաւանական լինի:

Օտար ազգեր չմեղքուած են Գրիգորեան Հայք՝ անտարկելով ըլլաւր Լուսաւորիչ Հայրեն, յորմէ եւ սերտալինքս անգղաւորաբար Լուսաւորիչեան կամ Լուսաւորական անունը աւելցուցած են: Կը դուրսէք, Արժ. Տ. Հայր, եւ կը թերեւ բաւական միամիտ լինիլ հաւատարմ համար թէ «Գրիգորեան» Լուսաւորական կը նշանակէ: . . . Ո՞ր գիտուն, ո՞ր պատմագէտ, ո՞ր ճշմարիտ կրօնագէտ կամ կրօնագիր կըցած է այսպէս անուանել եկեղեցի մը, հասարակութիւն մը որ դժբաղդաբար գինքն բաժնած է ընդհանուր եկեղեցիէն, եւ կըզգիացեալ մնացած է խզելով իր կապը դր Ս. Գրիգոր Լուսաւորիչ հաստատած էր: Մեք իսկ որ գործածած եւ գրած եմք լաւաւ գաղտնիքն ինքուս, չնօքէր լէ զարմէնէն կրկնորէն: Բնաւ չեմք ուղած անտարկել զՍուրբ Լուսաւորիչ բաղմարդին եւ գերադասած առաջնալին Կաթողիկէ Եկեղեցւոյ, այլ միայն անտարկած եմք գրիգորեան ճաթեւան, որ իւր ազգաւոր ոգով լրացուցած է մեր համագրայինքն ընդհանուր եկեղեցիէ բաժնանալ անուր եւ ազգակործան ձեռնարկութիւնը:

Բայց ձեր կողմանէ դարձեալ լի մերժել բառ մը որ ցարգ քարոզուած էր ուրեք: Որչափ անգամներ կուտած են շատեր պրնդելու՝ յամառելու համար թէ Լուսաւորական են եւ այնպէս ալ կուզեն կոչուիլ: Շատ դիւրին է գրչին ծայրով «անգղաւորաբար» գրել եւ անցնիլ: Բայց անողորմ արամաբանութիւնն կը հարցնէ:

Ի՞նչ կրնայ արժեք եկեղեցի մը որ այսչափ դարեւր ընդունած, գործածած, սեպականած է բառ մը որ այժմ կը մերժէ, կը դառնա պարտէ իր անհիշ կամ ոչ-ուղղափառ: Ի՞նչ մտածել անոնց նրկատմամբ որ այսպէս դարեւր ամբողջ մոլորեցան. . . «անգղաւորաբար»: Եւ անոնց նկատմամբ որք հետեւեցան. . . «անգղաւորաբար» անշուշտ առանց հասկնալու թէ ծուռ ճամբէ կը թափանչին: Բայց հոռոմեական լինելու անհրաժեշտ անհրաժեշտութեան հարցադրումներն, եւ կը լսենք զայն որ կըսէ:

Եթէ Էջմիածնական չէք են ոչ Լուսաւորական, ի՞նչ էք ուրեմն. - Առաքելական. - Բայց ի՞նչպէս կրնաք առաքելական լինիլ չուք: որ գէթ առաքելական անընդհատ յաջորդութիւնն իսկ չունիք: Կաթողիկէ. - Բայց ծաղրաբանութիւն է այս, ի՞նչպէս կրնայ Կաթողիկէ ըսուիլ եկեղեցի մը որ հազիւ երեք միլիոն «Հայեր միայն» կը պարունակէ, եւ որ բացարձակապէս անշուշտ կամ մերժեալ է այլ ամեն քրիստոնեայ եկեղեցիներէ:

Ի դ՛ուր կը գոչէ Արժ. Յոգեւածագիրն թէ իւր եկեղեցին Հայ-եկեղեցի կանուանի: ուղիղ բանն կը բողոքէ նաեւ այս վերականգնող, որովհետեւ «Հայ» բառն ազգ մը, ցեղ մը կը ցուցնէ եւ ոչ կրօնական դաւանութիւն մը: Հայ եկեղեցին կրնայ լինիլ Կաթողիկէ

ինչպէս եղած է Սահակեան, Երնորհայիներու, Լաւորեացիներու համար, կարէ լինել ոչ-Կաթողիկէ, ինչպէս եղած է Տաթեւացիներու, Տուղթարգիներու, Հաղթաւորներու համար, կարէ չոյն իսկ լինել բողոքական, ինչպէս դժբաղդաբար կարի լաւալ կը տեսնուի աստ անդ: յորհիւ ազատախոհ (իւր բանեօր) եւ իւր եկեղեցւոյն աւանդութեանց անպէտ կամ արհամարհող անձանց. . . Մեք առաւել քան ամեն այլ ոք՝ Հայ եմք, քանի որ հակառակ այսքան ժամանակաց հալածանաց անտարկութեան, եւն, եւն, մինչեւ ցայսօր անասան անդրդուիլէ փառած եմք մեր շնորհազարդ Հայր եւ Հայրապետաց հաւատոյն եւ վարդապետութեան, Արժ. Մկրտեանի յոգեւածն միթէ կրնայ բռնաբարել մենէ Հայութեան իրաւունքն, կամ աւելի որոշ խօսելով՝ միթէ հայաստեան արիւն կրնայ ջնջել մեր Կրակաց մէջէն, Ո՞ր աստիճան աներոգ ատելութեամբ վառուած լինելու է որ մտածելու համար թէ կրօնական այս կամ այն վարդապետութեան դաւանութիւնն կրնայ դադարեցնել անձնը, վերաբերել այն ցեղին որ ծնաւ զինքն: Ասոնք այնպիսի աստիճաններ են որք գուցէ ներքին լինէին աստիճան մը դարձաւ: Բայց ապրիլ քսաներորդ յարու սեամին առջեւ եւ այնքան յաճախ կրկնելէ ետքն գիտութեան եւ լուսաւորութեան մեծադարգւոյն եղնիլ եւ ազգութեան թիւն ու կրօնը, հաւատք ու հայրենիք յիշել, անհնէն նուիրական եւ պայծառ բառից իմաստներն միտադնել խեղաթիւրել, ահա ինչ որ բաւական սաղտանելի է կարծեմ:

Գալով այն առարկութեան զոր Արժ. Յոգեւածագիրն կը քաղէ վերեւտիւ Օրացոյցէն, կը պատահանենք: արդէն Կաթողիկէ Հայոց այլեւայլ տներն նշանակուած լինելով, եւր յետոյ կը նշանակուին մեր համագրի եղբայր յատուկ տներն, միայն «Հայոց» բառերով լեկնային կիմացուի Ազգին այն մասն որ իւր մի քանի տներն, մեզ հետ չկատարելու բայց եթէ այս մեկնութիւնն չգոհացնէր Արժ. Յոգեւածագիրն, կրնէք: Գուցէ ոչ ոք առաւել քան զմեզ տողորեալ է անկեղծ հիացման եւ խորին յարգանաց այնչափ զեղուն զգացմամբ առ այն կրկին Միսիթարեան Միաբանութիւնը, որ Հայութեան մեծագոյն փառքն եղած են չուրջ երկու դարէ ի վեր եւ որք ուսումնալան տընտելութիւնն, գրական եւ գիտական անուրանալի շքեղութիւնն, մաքրափայլ սրբակրօն հոգեաց լուսազարդ համաստեղութիւնն իրաւամբ կը յիշենք մեզ մեր Ազգային Ս. Եկեղեցւոյն երջանիկ աւուրց վարդապետներն եւ միմեանք, որք կրթեցին, ազնւացուցին, բարձրացուցին զՀայութիւն, բայց այս ամենայն արգելք մը չէ մտածելու թէ իրենց օրացոյցին «Հայոց» յորձրձմն «անգղաւորութեան» արդիւնք եղած լինի, եւ յուսալու նաեւ որ հանին մի օր հրաժարիլ այդ անհիշ բացատրութեան գործածութեանէն:

Մանաւանդ թէ նոյն քաջուսուրի եւ բազմահմուտ Գեր. Հայր լուսաւորեց բարեհամալ եւ ազգօգուտ «Բազմապէս» Հանդիս: մէջ պատասխանելով առ Արժ. Բայց քաղիւն չէր: զանգիւնն յի՞ հետեւեալ իմաստալից խորհրդածութիւններն կընեն, «Ներքին մեզ առ այս յիշեցնել թէ (Էջմիածնական) կոչումն զէթ որչափ յայտնի է մեզ տրուած է այս դիմումը, զի որովհետեւ «Հայ» ազգի եւ արեւմտեան տունն է, չէ ուղուած զայն սեպականութեամբ տեսնել աղբիւն տեսնել մի մասին դաւանութեան «Հայ» անունը կար, մինչդեռ չկար ոչ քրիստոնեութիւն» եւ ոչ եկեղեցի, եկեղեցին սկսաւ Հրեասանէ եւ սեպականութիւն դարձաւ անխորի մասն աղբաց, որով (Հայ եկեղեցի, Յոյն եկեղեցի) եւ այլն (արամաբանութիւն սխալ բացատրութիւններ են): (1)

Արդ կը մնայ որ Արժ. Յոգեւածագիրն քարեհաճի ցոյց տալ մեզ եւ համարէն Ազգին թէ այդ եկեղեցին որ ոչ մի այլ քրիստոնեայ եկեղեցւոյ հետ միացեալ է այժմ ի՞նչ անուամբ պարտի յորձրձմն իրաւունքն զի մի կողմանէ տեղի չմնայ այլեւս անհիշութեան եւ յիշողութեան, եւ միւս կողմանէ փառատի կասկածն «չարամիտ պարտաւանք»:

Արդիւս առաւել անանդի բացատրութիւն մ'ալ գոր կը գործածէ Արժ. Հայր, զարմացն զմեզ, Կատարադրէք (Հարազատ Հայ Բանայ): Ձեզ (Հարազատ) գորչելով կենթադրէք անշուշտ թէ ուրիշ (Հայ Բանայներ) կան որոց վրայ կը ծանրանայ (անհարգաւորութեան) ամբողջաբար նախադրեցին: . . . Բայց ոչք են այդ քաջակամք, Ձեր եղբայրականաց մէջ թէ առ մեզ, ի՞նչպէս կը համարձակեք Ձեր Արժ. եղբայրակցներէն նախաձեռնար համարել զՁեզ եւ ենթադրելու այլոց թէ կան առ Ձեզ այնպիսիք որք չունենայով Ձեր արժանիք կամ առաքելութիւնն իրաւունքն չունին (Հարազատ Հայ Բանայ) կոչուելու:

Իսկ եթէ այդ ոչ-համեմատ բացատրութեամբ կանխարկեք զմեզ, զՀայ-Կաթողիկէ Բանայայ, կը յորդորենք զՁեզ որ հաճեք Հ. Այալեաններէ, Հ. Այալեաններէ, Հ. Բարաւորներէն զմեզ մինչեւ երանելի Տ. Կոմիտաս, Գրիգորիստեաններն Միսիթար Աթաբեկեաններն Ս. Գրիգոր Նարեկացի, հրաշային Ս. Ն. Լաւորեանցի, երկնահանգեան Ս. Ներսէս Շնորհալի, վեհաշունչ Ս. Սահակ Պարթեւ, երկնապարգեւ Ս. Գ. Լուսաւորիչ մեր Հայաստանեայց Կաթողիկէ եկեղեցւոյ համայն փառքն եւ համայն դիւցազունքն ուսումնասիրել, եւ ապա անկեղծ ու անխաղախ համոզման ոյժով զայ հրապարակել թէ ո՞ր կողմն կը գտնուին եւ այժմ (Հարազատ Հայ Բանայ):

«Ահա ասակ ուղղի սխալներ որ պատու կը ծախեն գործադրութեամբ»:

ԿԱԹՈՒԴԻԿԵ-ՀԱՅ ՄԸ  
ՄԵԾՈՒՆԱԿԻ ԱՍԿԱՐ  
Ն. 3604-3402

(1) Տես Բազմապէս Հանդիս-բան փետրուար 1897, էջ 70:

(1) Աւելորդ է ըսել թէ այն (անխաղախութիւն) որ կը վերադարձնէ Հոռոմայ կը կայանայ միայն (յիշում հաւատարմ եւ բարոյական):